ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԳՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/06 **ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի**

գ. Սարուխան «04» «10» 2018**թ.**
ժ 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ա. Ասլանյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ի. Բաղալյան, Ս. Հովհաննիսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ժ. Խաչատրյան

1. **Գնահատող հանձնաժողովը որոշեց.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 46-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով՝

- <<Շինպլյուս>> ՍՊԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ներկայացրած հայտարարությունը և որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (գնահատման թերթիկները և եզրակացությունը կցվում է)՝
- <<Շինպլյուս>> ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. **Գնահատող հանձնաժողովը որոշեց.**

Հաշվի առնելով այն հանգամանքը , որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկից ավելի մասնակից, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, անգործության ժամկետ սահմանելով սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու գործընթաց սկսել սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից՝ 09.10.2018թ. հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. **Գնահատող հանձնաժողովը որոշեց.**

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Սարուխան, Հ. Աբրահամյան 120 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝ _____ Ա. Ասլանյան

Անդամներ՝ _____ Ի. Բաղալյան

_____ Ս. Հովհաննիսյան

Քարտուղար՝ _____ Ժ. Խաչատրյան